Պարույր Սևակ

Գնացքն առաջ է սուրում

Գնացքն առաջ է սուրում, իսկ մտքերս՝դեպի ետ:
Իմ դեմ քաղաք է հսկա ու շենքեր են բազմահարկ,
Իսկ հետևում հիշում եմ մի ոտնաչափ արահետ,
Որով քայլել եմ քեզ հետ՝ երազելով մի տնակ:
Այստեղ՝ ծովն է փոթորկում, այստեղ՝ գետակ էր բարակ,
Որի ափին, հիշո՞ւմ ես, շրջում էինք միասին:
Դրսում ձյուն էր ու ձմեռ, իսկ մեր ներսում՝ հուր-կրակ,-
Նույն տրոփով էր զարկում երկու կրծքում երկու սիրտ:
Գնացքը կանգ չի առնում, արշավում է միշտ առաջ,
Իսկ ես մտքով կանգ առել ու նստել եմ այն քարին,
Որի հանդեպ, հիշո՞ւմ ես, դու հոգնաբեկ կանգ առար
Ու նստելով մի վայրկյան՝ ինձ վախեցած հարցրրիր.
-Այս ո՞րտեղ ենք մենք հասել: Վերադառնա՛նք: Չե՛մ ուզում:
Չհասկացա քեզ այնժամ, քեզ նայեցի կասկածով:
Հիմա այս խուլ գնացքին ես դիմում եմ նույն հարցով.
-Այս ո՞րտեղ ենք մենք հասել: Վերադառնա՛նք: Չե՛մ ուզում...